ՀՏԴ 82.09:371(479.25)

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԷԹՆՈԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

Աշոտ Մանուկյան
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
Հայաստան

Անոտացիա

Հոդվածում փորձ է արվում բացահայտել միջնադարյան հայ փիլիսոփա, վարդապետ Գրիգոր Նարեկացու ստեղծագործություններում արտացոլված էթնոդաստիարակչական գաղափարները: Կարծիք է հայտնվում, որ «Մատյան ողբերգության» ստեղծագործությունն ունեցել է էթնոդաստիարակիչ դեր և նպաստել է հայության ինքնապահպանման գործընթացին:

Բանալի բառեր՝ *ընտանիք, դաստիարակություն, էթնիկական մանկավարժություն, կրոն, մարդասիրություն, հոգևոր արժեքներ:*

Միջնադարի հայ մտավորականների համաստեղության մեջ էթնոմանկավարժական մշակույթի զարգացման գործում իր ինքնատիպ դերով առանձնանում է Գրիգոր Նարեկացին (951-1003 թ.թ.): Նա ապրել ու ստեղծագործել է հազարամյակների փոթորկահույզ խաչմերուկում, այնպիսի ժամանակաշրջանում, որը բնութագրվում էր Հայկական լեռնաշխարհում կենտրոնախույս ավատատիրության հզորացման, դրանից բխող կենտրոնաձիգ իշխանության թուլացման ու կրոնական խնդիրներով, աղանդավորական հզոր շարժումներով և արտաքին քաղաքական վտանգներով: Ըստ Վ. Մ. Վարդանյանի՝ այդ ժամանակաշրջանում հասարակության ներսում տիրող հոգեբանական մթնոլորտի վրա իրենց ազդեցությունն են ունեցել Քրիստոսի գալստյամբ պայմանավորված սպասելիքները [7; էջ 66]:

Գր. Նարեկացու հոգևոր ժառանգության հարցերին անդրադարձել են աստվածաբաններ, գրականագետներ, պատմաբաններ և այլ մասնագետներ: Նրա մասին Ն. Լամբրոնացին արտահայտվում է հետևյալ կերպ. «Յորոց մի էր և իմն աստուածաշնորհ, և յոգունց գերազանց՝ հրեշատակն 'ի մարմնի Գրիգոր Նարեկացի» [6; էջ 157]: Բարձր գնահատելով Գր. Նարեկացուն, որը համարձակվել է բանականության հայացքով ընդգրկել Լինելիության, Բախտի և Տիեզերքի գաղտնիքները, Է. Մեժելայտիսը գրում է. «Հոգևոր ինքնադաստիարակությունը հիմնվում է իր նկատմամբ ունեցած ինքնաքննադատության վրա» [8; էջ 52]: Ուշագրավ է Աստծո հետ զրույցի մեջ մտած հայ մտավորականի ստեղծագործությունների՝ մանկավարժության տեսանկյունից քննությունը:

Գ. Նարեկացին Գուրգեն-Խաչիկ Արծրունի թագավորի պատվերով 970 թվականին գրում է «Մեկնություն «Երգ երգոցի»» («Մեկնութիւն երգոց երգոյն Սողոմոնի») վերլուծական աշխատությունը: Աշխատության սկզբում, դիմելով պետության ղեկավարին, նա կարևորում է նախաձեռնության կրթական արժեքը. «Արդ, նախ ուրախացա այս բանի համար, որ Գիրքը քննելու նման մտահոգացում ունեցար և հոգ տարար ուսման…» [2; էջ 21]: Զարգացնելով իր միտքը՝ նա երանի է տալիս այն մարդուն, որը կյանքում չի քայլում ամբարիշտների խորհրդով: Այդ ուսումնասիրության մեջ Գր. Նարեկացին լուսաբանել է համամարդկային դաստիարակչական նշանակություն ունեցող այնպիսի արժեքներ, ինչպիսիք են ընտանիքը, սերը, գիտելիքը: Նա, վերլուծելով Աստվածաշնչի մաս կազմող ներընտանեկան

փոխհարաբերություններ արտացոլող երգերը, եզրակացնում է. «Ուրեմն, ով ամուսնությունը պղծում է պիղծ անառակությամբ և չար գործերով, եկեղեցու խորհուրդն է պղծում և Քրիստոսին է անարգում, որ սրա օրինակն է» [2; էջ 25]:

Գրիգոր Նարեկացին ուշադրություն է դարձնում ընտանիք կազմելու համար ծնված տղամարդու և կնոջ հոգևոր-բարոյական կապին. «Արդ, չկա երկրի վրա ավելի պատվական և առավել սեր, քան տղամարդու և կնոջ սերը» [2; էջ 25]: «Տաղ ծննդեան», «Մեղեդի ծննդի» գոհարափայլ տաղերի հեղինակն իր վերլուծության մեջ կարևորում է կնոջ սոցիալական դիրքը և դաստիարակող դերը. «Այժմ ևս կանանց մեծարելու համար այրերը հարգում են կնոջ խրատը» [2; էջ 28]: Որպես փիլիսոփա՝ նա ուշադրություն է հրավիրում դեպի գիտության անսահմանությունը. «Քանզի որչափ մարդ հասնում է գիտության, այն հիմք է լինում առավել բարձր գիտության» [2; էջ 73]:

Հոգևոր բնույթի սողոմոնյան երգերի իր մեկնությամբ Գ. Նարեկացին դաստիարակում է մարդուն՝ ցույց տալով նպատակն ու դրան հասնելու միջոցը. «Ուրեմն, տե՛ս, նախ պետք է մեղքերի մարմինը մեռցնել, և Քրիստոսին մահակից լինել և անուշահոտ վարքով Քրիստոսի մաքրությանը հավասարվել…» [2; էջ 76]: Վերլուծելով Գր. Նարեկացու «Մեկնութիւն «Երգ երգոցի»» աշխատությունում արտացոլված բարոյափիլիսոփայությունը՝ Վ. Կարապետյանը կարծիք է հայտնում, որ նրա «հարցադրումներն այսօր ևս չեն կորցրել իրենց նշանակությունն ու կարևորությունը, հետևաբար նրա այս աշխատությունից արժանի դասեր կարող է քաղել ամեն ոք…» [5; էջ 299]:

Գր. Նարեկացու ստեղծագործություններից դաստիարակչական հզոր ներուժով առանձնանում է «Մատյան ողբերգության» կենսափիլիսոփայական պոեմը, որում հայրենասեր մտավորականը քննում է մարդ-աստված փոխհարաբերությունները: Ըստ Մ. Մկրյանի՝ Գր. Նարեկացին երբեմն ուղղակի հիշատակություններ է անում, որ ինքը ստեղծագործում է՝ հետևելով ժողովրդական բանահյուսների օրինակին [1; էջ XXIX]: Գր. Նարեկացին այդ պոեմում իր ազգի սրտի խորքից շարունակել է զարգացնել համամարդկային մարդասիրական ավանդույթները: Խորապես մտահոգված լինելով անհատի, ազգի և մարդկության կենսակերպերի աններդաշնակությունից՝ մարդկանց կողոպտվածության, սայթաքումների, մոլորությունների, թշվառությունների համար նա ոչ թե մեղադրում է արարչին, ոչ թե կռվում է նրա հետ, այլ այդ երևույթները պատճառաբանում է մարդու հոգևոր աշխարհի աղքատությամբ, դաստիարակության ցածր մակարդակով.

«Քանզի մարդկանցից այն ո՛վ մեղանչեց, և չզղջաց.

Ո՛վ ապականվեց՝ և չամաչեց…

Ով գործեց անօրենություն՝ և իր խիղճը չքարկոծեց.

Ով տեսավ ստրուկին իր մեծության մեջ՝ և չցավեց» [1; էջ 127]:

Գր. Նարեկացին մարդու փրկությունը տեսնում է ոչ թե Աստծո կողմից մահկանացուի հոգեկանի հրաշագործ վերափոխման, այլ մարդու կողմից ճշմարտությունը որոնելու, կյանքում ինքնակատարելագործման, ինքնադաստիարակության ջանքերի միջոցով դեպի աստվածայինն ընթանալու մեջ:

Գր. Նարեկացին, հավատարիմ մնալով իր ազգային ավանդական պատկերացումներին, ընտանիքը կարևորում է ամբողջության մեջ՝ ընդգծելով կենսասոցիալական այդ կառույցի առանցքային դաստիարակիչ դերը մարդու և հասարակության համար: «Մատյան ողբերգության» մեջ նա հաստատագրում է հոր, մոր և որդու միասնությունը, ծնող-զավակ փոխհարաբերություններում *որդու* վրա հայրական գթառատ սիրո ցողվելու կարևորությունը [1;

էջ 260]: *Միջնադարյան կենսափիլիսոփայական այս պոեմում ըստ էթնոմտածելակերպի բյուրեղացված են կինը և ընտանիքը:* Աստվածածինը՝ որպես կին, բնութագրվում է անբիծ մաքրությամբ օժտված անմահ կենաց ծառ: Ըստ Գր. Նարեկացու՝ ընտանիքի բոցեղեն մայրությունն է, որ որպես բարեխոս խնամակալ՝ մարդուն պետք է առաջնորդի դեպի քավություն՝ սխալների գիտակցում, հետևաբար և դրանց շտկում [1; էջ 343-346]: Կարելի է ասել, որ *մայրական դաստիարակությունը դիտվում է որպես հոգևոր մաքրության ակունք*:

Գր. Նարեկացին չի սահմանափակվում լոկ մարդու մեղքերի թվարկմամբ. նա համամարդկային սիրո տեսանկյունից ցույց է տալիս *կենդանական, բնազդային մակարդակից դեպի անսահման կատարելությունը՝ աստվածային իմաստությունն ինքնաճանաչման միջոցով ընթանալու ուղին*: Ըստ նրա՝ տիեզերքի ճանաչման համար մարդը պետք է՝

«…Ճանաչի իրեն որպես մարդ մահկանացու,

Համարի երկրածին իրեն և իր չափի ու սահմանի մեջ մնա» [1; էջ 27]:

Հոգևոր ինքնակատարելագործման միջոցով անհատի ազատությունը Գր. Նարեկացու համար նպատակային արժեք է: Մարդու ազատության համար հոգեհանճար իմաստունը դիմում է Աստծուն.

«Հանի՛ր ինձ բանտից, արձակի՛ր կապանքներից,

Պոկի՛ր ինձ պրկող իմ շղթաներից,

Ազատի՛ր տագնապներից, քանդի՛ր երկաթներից » [1; էջ 360]:

Գր. Նարեկացին՝ որպես մարդասիրության վարդապետ, մարդուն առաջնորդելով դեպի աստվածային կատարելություն, նրան ուղղորդում է դեպի համամարդկային ազատություն: Կարծում ենք, որ «Մատյան ողբերգության» գիրքը համամարդկային հոգևոր դաստիարակության հուշարձան է:

Լինելով ազգությամբ հայ և քրիստոնյա հավատացյալ՝ «Մատյան ողբերգության» պոեմի մարդասեր հեղինակը մարդուն չի առանձնանցնում ըստ ազգային կամ կրոնական պատկանելության: Գր. Նարեկացու աշխարհընկալման տիեզերքում կա երկու երևույթ՝ Աստված և նրա ստեղծած մարդկությունը: Այսինքն՝ *մարդը կամ հավատացյալը՝ որպես մարդկության մասնիկ, չի կարող երջանիկ լինել համամարդկային մշակութային ոլորտից դուրս, յուրաքանչյուր մարդ պատասխանատու է մարդկության համար:* Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» ստեղծագործությունում մարդու կյանքը միահյուսված է մարդկության կյանքի հետ, և որպես այդպիսին *էթնոկրի դաստիարակման կենսափիլիսոփայությունն ազգայինից բարձրանում է համամարդկային աստիճանի:* Իր երկխոսության մեջ նա քաջությամբ իր ուսերին է վերցնում երկրների, աշխարհի, մարդկության պատասխանատվության բեռն Աստծո առաջ: Էթնիկականից դեպի համամարդկայինն ընթացող կենսափիլիսոփայական նման վերացարկում հետագայում տեսնում ենք գերմանացի փիլիսոփա-մանկավարժ Ա. Դիստերվեգի հայացքներում. «Իմ անունը մարդ է, իմ մականունը՝ գերմանացի» [3; 435]:

Գր. Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմն ընթերցող հայ մարդն Աստծո հետ ընթացող զրույցում փորձել է գտնել ինքնապահպանման և ինքնակատարելագործման ուղին: Ենթադրելի է, որ դա մեկն է այն պատճառներից, որ այդ ստեղծագործությունը վերածվել է ազգային պաշտամունք ունեցող սոցիալական արժեքի: Որպես սրբություն՝ «Խուտոյի տան Նարեկ», այն հիշատակվում է նաև «Սասնա ծռեր» էպոսի տարբերակներից մեկում [4; էջ 462]:

Էթնոմանկավարժական փիլիսոփայության տեսանկյունից Գր. Նարեկացու ստեղծագործություններում արտացոլված հոգեվերլուծական փորձը և ինքնադաստիարակության, ազատության, մարդասիրության գաղափարները դարեր շարունակ

սնել են և այսօր էլ սնում են հայ մարդու էթնոգիտակցությունը՝ վերածվելով հանրության բոլոր անդամների՝ «Ծեր թե երեխա, կույս թե երիտասարդ…» [1; էջ 384] *տոնելի մարդասիրության, կրքերի կարգավորման, կամքի կրթարանի, աճող սերնդի «զվարթ քաղցրությամբ» դաստիարակության հոգեկազդուրիչ ուղեցույցի:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑԱՆԿ

1. Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, -Եր.: Հայպետհրատ, 1960, -408+34 էջ:
2. Ս. Գրիգոր Նարեկացի, Մեկնություն Երգ Երգոցի, -Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2007, -236 էջ:
3. Դիստերվեգ Ա., Մանկավարժական ընտիր երկեր –Եր.: Հայպետուսմանկհրատ, 1963, -489 էջ:
4. Էմինեան ազգագրական ժողովածու, հատոր Դ, -Մոսկուա-Վաղարշապատ: հրատարակութեամբ Լազարեան ճեմարանի արևելյան լեզուաց, 1902, -8+462 էջ:
5. Կարապետյան Վ., Գրիգոր Նարեկացու բարոյափիլիսոփայությունը (ըստ «Մեկնութիւն «Երգ երգոցի» աշխատության»), էլ.հասցե՝ http://kantegh.asj-oa.am/1896/1/292.pdf
6. Ներսես Լամբրոնացի, Ատենաբանություն և թուղթ և ճառք, -Վենետիկ, Սուրբ Ղազար, 1838, -238 էջ:
7. Վարդանյան Վ.Մ., Գրիգոր Նարեկացին ժամանակի աշխարհազգացողության ծիրում, -Էջմիածին, Մայր Աթոռ Ս.Էջմիածնի տպարան, 2003 օգոստոս, -133 էջ:
8. Межелайтис Э., Армянский феномен, -Ереван, Советакан грох 1982, 116 с.

РЕЗЮМЕ

Этно-воспитательные идеи Григора Нарекаци

Ашот Манукян

Ключевые слова: Семья, воспитание, этническая, педагогика, религия, гуманизм, духовность, ценности.

В статье делается попытка выявить воспитательные идеи, отраженные в произведениях средневекового армянского философа, архимандрита Григора Нарекаци. Выражается мнение, что произведение «Книга скорбных песнопений» имела этно-воспитательную роль и способствовала сохранению армянской национальной идентичности.

SUMMARY

Ethno-Educational Ideas of Grigor Narekatsi

Ashot Manukyan

Key words: Family, upbringing, ethnic, pedagogy, religion, humanism, spirituality, values.

The article attempts to identify the ideas about upbringing reflected in the works of the medieval philosopher and archimandrite Grigor Narekatsi. The case is made that the work “Book of Prayer” played an ethno-upbringing role and contributed to the preservation of the armenian national identity.